ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ·

Դեկտ· 7 Սինոդը Ղազախեցի Աբգար քհնյ· Ցարութիւնեանի և Բաթումի ժողովրդականաց խնդրագիրները ուղարկելով Տփխիսի Ս· Գէորգ եկեղեցու միաբան Յովհաննէս քհնյ· Մարտիրոսեանցին· հրամայեց նորան անյապաղ գնալ Բաթում՝ յիշեալ խնդրագրերի մէջ գծած բողոքների յօդուածները քննել և արդարութեամբ երևան հանել Կոստանդին քահանայի մասին բողոքներն՝ ու քննութեան արդիւնքը ճանապարհի ծախուց ցուցակի հետ ներկայացնել Սինոդին՝ այս մասին տեղեկացնելով Տփխիսի Հայոց Կոնսիստորիային՝ պատուիրեց փոխարինաբար տալ յիշեալ Յովհաննէս քհնյին վիճակային արդիւնքից ըստ հեռաւորութեան՝ ճանապարհածախս՝ որը քննութիւնից յետոյ կպահանջուի յանցաւորից։

—

Դեկտ· 7· Սինոդը՝ Աղէքսանդրապոլի Հայոց հոգևոր կառավարութիւնից առաջարկուած տումարները և թղթերը վերադարձնելով՝ հրամայեց պատուիրել Մարտիրոս Աւագ քհնյ Տէր Պողոսեանի գանձապահ և անդամ կարգուելու օրից համեմատել բոլոր հաշուեմատեանները և ցուցակները իւր գործերի հետ՝ թէ որքա՞ն և ինչ դրամներ է նա ստացել՝ ի՞նչի համար է ծախսել՝ որի՞ հրամանով՝ և որքան է մնում պահանջելի դրամ նրանից։ Վերահաստատ լինել՝ թէ ի՞նչու տարուայ սկզբում 1891 թուից վիճակային և օտարաց տումարների մէջ չէ գրել աւելացած դրամները՝ այսպիսի տեղեկութիւններ քաղել և անցեալ տարիների

Տումարներից ու հետևանքի մասին յայտնել Սինոդին։ Ի նկատի առնելով վիճակային և օտարին գրամոց ժապաւինեալ տումարների անկանոնութիւն և թերութիւնը պատուիրել Կառավարութեանը՝ Ա. յայտնել խիստ յանդիմանութիւն նախկին նախագահին և անդամներին. Բ. այսուհետև տումարները վարել կարգին իւրեանց յատուկ պատասխանատուութեամբ գրելով շարունակ մուտքը և ծախսը իւրեանց տեղում՝ առանց միմեանց խառնելու։ Գ. Գանձապահի ձեռքով գրել մուտք և ծախսերը օրագրի հիման վերայ ստացած հրամանագիրների համեմատ՝ նշանակելով ամսաթիւը և թուահամարը իւրաքանչիւրը իւր տեղում՝ նոյնպէս և փոխանցումն. Դ. տարուայ սկզբում գրել անցեալ տարուանից աւելացած դրամները և ապա տարուայ ընթացքում եղած մուտք ու ծախսը. Ե. իւրաքանչիւր ամսուայ սկզբում նախագահի և անդամոց ներկայութեամբ անել ստուգութիւն մուտքերի և ծախսերի՝ համեմատելով յօդուածները գանձապահի ստացած հրամանների հետ և միւս վկայագրերը և երևացածների համար նոյն տումարի մէջ անել արձանագրութիւն. Զ. պատուիրել գանձապահին՝ ստացած հրամանագիրները և վկայագրերը պահել կարգին և ստուգութեան ժամանակ իրրև ապացոյց մտից և ծախուց ներկայացնել. Է. գանձապահ կարգել օրագրով։ Վաստուած՝ ինքնագլուխ ծախսած և կորցրած դրամներին պատասխանատու են նախագահն և անդամները բարձրագոյն հոգևոր իշխանութեան առաջ. Ը. Պսակներից հոգեբաժնից՝ լուսագնից և ուրիշ եկամուտներից ստացած դրամների համար գործակալներին և այլ հոգևոր պաշտօնեաներին տալ ժապաւինած և վաւերացրած տումարներ՝ որոնք ստացած դրամները արձանագրելով ամսէ ամիս ներկայացնեն՝ իսկ տարուայ վերջը տումարները աւելացած դրամների հետ որը գանձապահը ստանալով յօդուած յօդուած մտցնելու է տումար հրամանին համաձայն. Թ տարուայ վերջը՝ լիակատար ըստ մուտքի և ծախսերի ստուգութիւնից յետոյ՝ քննութեան համար ուղարկել տումարը ապացուցական թղթերի հետ Կոնսիստորիայն իսկ հաւասարը ներկայացնել Սինոդին։

Դեկ. 11. Երևանի Հայոց վիճակային կոնսիս սորիայի թ. 3159 3279, 3203, 3145, 3286, 3128, 2031, յայտարարութեանց համեմատ՝ Սինոդը հրամայեց թոյլ տալ մնալ ամուսնութեան խնամէական հինգերորդ աստիճանի, Գորիսեցի Սեդրակ Բալայեանին կատինկայ Զիլֆուղար բէգեանցի հետ, Արամուսցի Նիկողայոս Ալլահվերտեանին Աշխէն Ոսկանեանի հետ, Գէորգ Ասոյեանցին խար գիւղացի Նունէ Պարինեանցի հետ, Զանջիրլուեցի Մեսրոպը Սահակեանին Կալինիկէ Աւետեանի հետ, Թմբուլցի Սողոմոն մահտեսի Շահբազեանին Ովսաննայ տէր Ստեփանեանի հետ, Ովիա-Նորաշէնցի Յակոբը Գէորգեանին Տիլբար Մկրտչեանի հետ, Եարմջեցի Նիկոլայ Ստեփաննոսեանին Գիւլի Յակոբեանցի հետ, Տփխիսի կոնսիստորիայի թ. 4112 յայտարարութեան համեմատ Ախալսոփելցի Աբրահամ Գլագոեան Օքոլքոկեանցին Նինոյ Սահակեան Աբուլեանցի հետ. Աստրախանի՝ թ. 2213 յայտարարութեան համեմատ Ս. Խաչ քաղաքացի Զաքար տէր Մովսէսեանցին Խոսրովիդուխտ Ալէքսանեանի հետ. և Ղարաբաղի կոնսիստորիայի թ. 1535, 1528, 1951, 1650, յայտարարութեանց համեմատ Ստեփան տէր Սարգսեանցին Աննա Զաքարեան Քեւխեանցի հետ, Սուլթան Նուխեցի այրի Խայի Գրիգորեան Մերանեանցին այրի Թագուհի Յովհաննիսեանցի հետ, Սղնախ գիւղացի Յակոբը Մովսիսեանին Անուշ Զանիեանցի հետ, Շուշեցի Համբարձում Ժամհարեանցին Մարիամ Հայրապետեանի հետ։

—

Դեկտ. 16. Սինոդը հրամայեց ուղարկել բոլոր վանքերի վանահայրներին ժապաւինած տումարներ 1893 թուի եկ և մնից համար, պատուիրելով նոցա գրել ստացած տումարների մէջ վանքի ամեն տեսակ մուտք և ծախք Սինոդից շատ անգամ տուած հրահանգների համաձայն. կազմել եկեմտական համառօտ ցուցակ մատուցանելու վիճակային կոնսիստորիաներին մինչև 1894 թուի Յունուարի 10-ը իսկ տումարները ուղարկել Սինոդին ղննելու։

—

Դեկտ. 16. Սինոդը հրամայեց պատուիրել Ղարաբաղի Հայոց վիճակային կոնսիստորիային թոյլ տալ Շուշեցի Մարգարիտ Հա-

թամ — Գիւխեանցին մնոնել նոր ամուսնութիւն, որովհետև նորա այր Մկրտիչ Ստեփանեան մեղադրուած լինելով իւր մօր սպանման գործի մէջ, տասն և հինգ տարով դատապարտուած է տաժանակիր աշխատանքի և մշտական բնակութեան Սիբիրիայում։

—

Դեկտ. 18. Սինոդը պատուիրեց Տփխիսի Կոնսիստորիայի նախանդամ Արժ. Անանիա վարդապետ Համազասպեանցին նախագահել Ներսիսեան հոգևոր դպրոցի Հոգաբարձական ժողովներին քանի չէ նշանակուած վիճակին առաջնորդ։

—

Դեկտ. 18. Սինոդը վերադարձնելով Բեսարաբիոյ և Նոր-Նախիջևանի Հայոց Կոնսիստորիայի 1891 թուի ել և մտից տումարները, պատուիրեց բացատրութիւն տալ հաշիւների մէջ եղած թերութեանց մասին յօդուած առ յօդուած, որոնք եղած են արտաքոյ սահմանուած ծախսից և առանց Սինոդի գիտութեան. 1893 թուից կարճել Ատենադպրի տարեկան կառքի վարձ մի հարիւր ռուբլին, և ներկայացնել Սինոդին այս մասին հանգուցեալ կաթուղիկոսի այն մակագրութիւնը, որով թոյլ է տալիս այդպիսի ծախսեր անելու։

—

Դեկտ. 23. Արժ. Մակար ծ. վարդապետ Բարխուդարեանցին Սինոդը արձակեց փոխանորդութեան պաշտօնից և նշանակեց Ղարաբաղի վիճակի Ամարաս վանքի վանահայր։

—

Դեկտ. 23. Ս. Էջմիածնի վանական կառավարութեան 168 յայտարարութեան համաձայն Սինոդը հրամայեց Մայր Աթոռի գանձապահին տալ միաբանների սենեակների նոր շինութեան ծախսուց համար 1850 ռուբլի, որ անցեալ ամիսներում ստացած գումարի հետ կանէ 37850 ռուբլի։ Եւ 167 թ. յայտարարութեան համաձայն Մայր Աթոռի և ճեմարանի Դեկտեմբեր ամսի ծախսուց համար 10,000 ռուբլի, որը տասն և մէկ ամսուայ ընթացքում ստացած 94,000 ռուբլու հետ կանէ 104000 ռուբլի։

—

Դեկտ. 28. Որովհետև Դիրքեցի Աղէքսանդր Յարութիւնեան

Աբրահամեանց Սինոդի շրջաբերական հրամանի համեմատ չունի ուսումն, Սինոդը Շամախու Հայոց Կոնսիստորիայի միջնորդութիւնը նորա քահանայութեան մասին մերժեց։

—

Դեկտ. 28. Շամախու Կոնսիստորիայի Ատենադպիր Շահվերտեանցին երկու հարիւր ռուբլի պարգևաբաշխութեան և կարգապահ գուբերնսկի սեկրետար Յովսէփ Սերգէեանցին շքանշանի համար արած կոնսիստորիայի միջնորդութիւնը Սինոդը մերժեց։

—

Դեկտ. 28. Աստրախանի Հայոց Կոնսիստորիայի ցուցմամբ Յիմէօն Գրիգորեան Կորժէնեանցի բողոքը Գասպար քհնյ. Խալաֆեանցի մասին սուտ լինելով, Սինոդը հրամայեց կարճել այս գործը։

—

Դեկտ. 30. Սինոդը՝ ի նկատի առնելով Տփխիսի նահանգական քննիչ Տրագնիչևի և նորին ամենապատուութեան Տէր Տեղապահի նշանակած քննիչ մասնաժողովի Տփխիսում պատահած անցեալ Յունուարի 6-ին աղէտի քննութեան գործերը, հրամայեց արձակել Տփխիսի Կոնսիստորիայի անդամութեան պաշտօնից Ղևոնդ աւագ քհնյ. Խարազեանցին և Գէորգ քհնյ. Գալստեանցին, դադարացնելով նաև քահանայագործութիւնից իբրև մեղադրեալներ, մինչև այս գործի աւարտումն դատարանում։

—

Դեկտ. 30. Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն Սինոդը հրամայեց թոյլ տալ վիճակային արդիւնքից տալ սնունդ տարեկան 70 ր. հանգուցեալ Գրիգոր քհնյ. տէր Եսայեանցի չքաւոր այրուոյն և նորա վեց դեռահաս զաւակներին մինչև որդիներից մինի արբունք հասնելը։

—

Դեկտ. 30. Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ թեմի Կառավարիչ Գեր. Գրիգոր եպս. Ազափիրեանցի 1050 յայտարարութեան համեմատ Սինոդը պատուիրեց նոյն թեմի Կոնսիստորիային՝ Միքայէլ Շալամեանցին կարգել սպասաւոր Պետերբուրգի Հայոց

եկեղեցուն և նորա անունը մուծանել ի շարս թեմի հոգևորականների։

—

Դեկտ. 30. Սինոդը Մկրտիչ վարդապետ տէր Թադէոսեանին նշանակելով Վանահայր Արգեազու Ս. Խաչ վանքին՝ պատուիրեց, իւր խոստման համաձայն սկսել կարևոր նորոգութիւնները— ծածկել Ս. Խաչ վանքի տանիքը թիթեղով, ոպիտակացնել եկեղեցին ներսից, իսկ դրսից վայելուչ գոյնով ներկել, խախտուած տեղերը նորոգել, անյարմար և անպիտան սենեակները քանդել և նորերը շինել, վանքի եկամուտից միայն 600 բուբլի ամի ամի ուղարկել Էջմիածին, իսկ Հմայեակ վարդապետ տէր Յարութիւնեանին կարգել վանահայր Ս Ստեփաննոսի (Կարմիր վանք)։ Կարմիր վանքի վանահայր Թադէոս Աբեղայ Առիւծեանցին վանահայր Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախամարտյրի։

—

Դեկտ. 30. Սինոդը հրամայեց տալ Երևանցի Աղաջան Թադիանոսեանցին Էջմիածնապատկան Զամեր անուանուած հողերը տարեկան չորս հարիւր (400) բուբլով, հինգ տարի ժամանակով։